Տ. ՏԻՐԱՅՐ ՔԱՀԱՆԱ ՀԱՏԱՎՅԱՆ
/ Արամ սարկավագ /

Ծնվել է 1976 թ. Պլովդիվ քաղաքում:

1984-94 թթ. միջնակարգ ուսումը ստացել է Սոֆիա քաղաքում:

Փոքր տարիքից ծառայել է եկեղեցում և միաժամանակ հակում ունեցել արհեստների հանդեպ, մասնավորապես՝ ոսկերչության:

1986 թ. ծառայել է Սոֆիայի Ս. Աստվածածին եկեղեցում:

1994 թ. ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Տիրայր արքեպս. Մարտիկյանի:

1999 թ. մայիս 30-ին Բարձրաշնորհ Տ. Տիրայր արքեպս. Մարտիկյանի ձեռամբ ձեռնադրվել և օծվել է քահանա:

Նորընծա քահանան իր ծառայությունը շարունակելու է Ռուսե քաղաքում:

Տ. ՄԱՐԳԻՍ ՔԱՀԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
/ Արքուր սարկավագ /

Ծնվել է 1978 թ. Էջմիածին քաղաքում:

1985-93 թթ. սովորել է տեղի թիվ 2 միջնակարգ դպրոցում:

Փոքր տարիքից հաճախել է Էջմիածնի Ս. Աստվածածին եկեղեցի:

1993-96 թթ. սովորել է Գյումրիի հոգևոր ընծայարանում:

1996 թ. սեպտեմբեր ամսից ծառայության է անցել Աշտարակ քաղաքի Ս. Մարիանե եկեղեցում:

1997 թ. օգոստոսի 3-ին, ձեռամբ Արագածոտնի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ եպս. Կճոյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1997 թ. դեկտեմբեր ամսից ծառայության է անցել Բուլղարիայի Վառնա քաղաքի Ս. Սարգիս եկեղեցում, որպես սարկավագ:

1999 թ. մայիսի 30-ին Բարձրաշնորհ Տ. Տիրայր արքեպս. Մարտիկյանի ձեռամբ ձեռնադրվել և օծվել է քահանա:

Նորընծա քահանան իր ծառայությունը շարունակելու է նույն եկեղեցում:

ՀԱՎԱՔԱԿԱՆ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴՊՐՈՒԹՅԱՆ ՉՈՐՍ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ՏՎՅՈՒԹՅՈՒՆ ՎԱՌՆԱՅԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Հունիսի 6-ին, կաթողիկե Ս. Էջմիածնի տոնի օրը, Վառնայի Ս. Սարգիս եկեղեցին կրկին լեցուն էր բազմաթիվ հավատացյալներով, որտեղ մատուցվեց Ս. Պատարագ, որին ներկա էր առաջնորդ Սրբազան Հայրը:

Սրբազան Հայրն իր քարոզի մեջ վեր հանեց Ս. Էջմիածնի և ընդհանրապես Մեր եկեղեցու դերը և նշանակությունը հայ հավատացյալների կյանքում: Հավարտ Ս. Պատարագի Սրբազան Հայրը, ընդառաջելով հոգևոր հովվի և եկեղեցական վարչության խնդրանքին, դպրության չորս աստիճաններ շնորհեց Սուրեն Ներսիսյանին:

Այնուհետև կատարվեց բացառիկ պատմական մի իրադարձություն բուլղարահայ թեմական կյանքում: Սրբազան Հոր նախագահությամբ, Տ. Սիոն վարդապետ Ադամյանի և նորընծա Տ. Սարգիս քահանա Հովհաննիսյանի մասնակցությամբ ու կնքահայրությամբ Բուլղար Մեթոդիստ Եկեղեցու վերապատվելի Պետրոս Ալթունյանի, կատարվեց տասնհինգ երեխաների հավաքական մկրտություն:

Սրբազան Հայրն այս կարևոր իրադարձությունը և հավաքական մկրտությունը նվիրաբերեց քրիստոնեությունը Հայաստանում որպես պետական կրոն հռչակման 1700-ամյակին: Նոր մկրտվածները, որոնք մեծ մասամբ Հայաստանից եկած ընտանիքների զավակներ էին, կնքահոր կողմից և Սրբազան Հոր օրհնությամբ ստացան ոսկե խաչեր:

ԴԻՎԱՆ ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ